**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ------ 2023թ.** **N -Ա**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն Ռոմանոս Մելիքյանի հարթաքանդակը ք. Երևան, Մաշտոցի պողոտայի 11 հասցեում տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ** **ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

2023 թվականի ……-ի

հ. –Ա որոշման

# ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ

1883- 1935

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում «Երևանի Ռ.Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն Վ.Խաչումյանի 02.10.2023թ. դիմումը, որով դիմումատուն առաջարկում է Մաշտոցի պողոտայի 11 հասցեում տեղադրել Ռոմանոս Մելիքյանի հարթաքանդակը:

Ներկայացված առաջարկության վերաբերյալ դրական եզրակացություն են տվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Պետական գույքի կառավարման կոմիտեն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժինը:

Հարթաքանդակը, որը նախատեսվում է տեղադրել Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի վարչական շենքի ճակատային հատվածում, իրականացվում է ի նշանավորումն հայ անվանի կոմպոզիտոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Ռոմանոս Մելիքյանի ծննդյան 140-ամյա, ինչպես նաև վերջինիս անունը կրող հնագույն երաժշտական հաստատություններից մեկի՝ պետական երաժշտական քոլեջի հիմնադրման 100-ամյա հոբելյանների:

Հարթաքանդակի իրականացման ֆինանսական ծախսերը կկատարվի «Թովմասյան» հիմնադրամի կողմից:

Հարթաքանդակի հեղինակը քանդակագործ Ի. Ապրելյանն է:

Երաժշտագետ, խմբավար և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանը ծնվել է 1883թ. հոկտեմբերի 1-ին Հյուսիսային Կովկասի Ղզլար քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Ղզլարի ծխական դպրոցում, միջնակարգը՝ Նոր Նախիջևանում, ուր և սկսվում են նրա երաժշտական պարապմունքները դպրոցի երգչախմբում:

1900 թվականին Մելիքյանը ստանձնում է Նոր Նախիջևանի սբ. Գևորգ եկեղեցու երգչախմբի ղեկավարի պաշտոնը և սկսվում է նրա կատարողական, ապա և ստեղծագործական գործունեությունը:

Դպրոցն ավարտելուց հետո (1902թ.) Ռոմանոսն ընդունվում է Ռոստովի երաժշտական ուսումնարան: Ուսումնառության տարիներին ստեղծագործական առաջին փորձերն է անում, մշակում է ժողովրդական երգեր ու շարականներ:

1905 թվականին Մելիքյանը մեկնում է Մոսկվա և մեկ տարի մասնավոր դասեր ստանալուց հետո ընդունվում ժողովրդական կոնսերվատորիա:

Մոսկվայում շարունակվում է Մելիքյանի խմբավարական գործունեությունը: Ղեկավարում է Լազարյան ճեմարանի երգչախումբը, որի համար մշակում է մի շարք ժողովրդական երգեր՝ «Վարդ կոշիկս», «Արազը հեշտացել է», «Գնաց գարուն» և այլն:

1921թ.-ին Հայաստանի կառավարությունը նրան հրավիրում է Երևան՝ երաժշտական ստուդիա հիմնելու: Սովի, տնտեսական քայքայվածության, քիչ թե շատ կազմակերպված երաժշտական կյանքի բացակայության պայմաններում Մելիքյանը, ինչպես գրում է Ստ. Զորյանը, «կարճ ժամանակում ստուդիան դարձրեց ամենաօրինակելի հաստատությունը Երևանում՝ իր կահավորումով, մաքրությամբ, կարգապահությամբ»:

Մելիքյանը կարևոր դերակատարություն է ունեցել Երևանի օպերային թատրոնի հիմնադրման հարցում: Նա առաջ է քաշել Կոմիտասի երաժշտական ժառանգությունը Հայաստանում կենտրոնացնելու գաղափարը:

Երաժշտական-հասարակական գործունեության այս բուռն տարիներին Մելիքյանը շարունակել է իր ստեղծագործական աշխատանքը: Վերջնականապես հղկում ու հրատարակության է հանձնում «Զմրուխտի» երգաշարը (1928թ.), ավարտում է «Զառ-վառ» երգաշարը, հրատարակում երկու ժողովածու՝ «Մանկական երգեր» և «Պիոներական երգերը»: Մահացել է 1935 թվականին, Թիֆլիսում:

Կարևորելով Ռոմանոս Մելիքյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը արժևորելու, ծննդյան 140-ամյա, նրա անունը կրող երաժշտական հաստատության հիմնադրման 100-ամյա հոբելյաններին պատշաճ կերպով անդրադառնալու անհրաժեշտությունը, առաջարկվում է տալ համաձայնություն Ռոմանոս Մելիքյանի հարթաքանդակի տեղադրմանը և ընդունել սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**